ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «09» օգոստոսի 2017 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 42-Ա

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017թ. մայիսի 2-ի N 467-Ա/2 հրամանը, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի 2017թ. հունիսի 20-ի N32-Ա հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2017թ. օգոստոսի 7-ի նիստի արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցության մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տ. Գալստյան)՝ գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2017 թվականի օգոստոսի 1-ից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի
2017 թ. օգոստոսի 9-ի N 42-Ա հրամանի

Ց Ա Ն Կ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԻ

Հ/հ	Ծածկագիր	Թեմայի ղեկավար	Թեմայի վերնագիր	Բնագավառ, մասնագիտություն	Կազմակերպություն
1.	17DP-1C025	Մելիքյան Սերգեյ Սուրենի	Տեսանելի և ինֆրակարմիր սպեկտրալ տիրույթում անօդաչու թռչող սարքերի հեռահար հայտնաբերման հնարավորությունների ուսումնասիրում	Բնական գիտություններ, ֆիզիկա և աստղագիտություն	ՀՀ ՊՆ «ԼՏ-ՊԻՐԿԱԼ» ՓԲԸ
2.	17DP-1F027	Գալստյան Սամվել Գալուստի	Գերբարձր հաճախականության էլեկտրամագնիսական դաշտի հետ մասնագիտական շփում ունեցող անձանց առողջական վիճակը, դրա բարելավման ռազմավարությունը՝ որպես զինված ուժերի բարձր մարտունակության պահպանման առանցք	Բնական գիտություններ, կենսաբանական գիտություններ	ՀՀ ԿԳՆ «Երևանի Մ.Հերացու անվ. պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
3.	17DP-2B008	Մարտոյան Գագիկ Աշոտի	Մետաղ-օդ և մետաղ-ջուր մարտկոցների արդյունավետությունների բարձրացման ուղիների բացահայտում	Ճարտարագիտություն և տեխնոլոգիա, էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ	«Էկոատոմ» ՍՊԸ
4.	17DP-2E026	Գրիգորյան Կարեն Գագիկի	Բաբախող օդային ռեակտիվ շարժիչների մշակում անօդաչու թռչող սարքերի համար	Ճարտարագիտություն և տեխնոլոգիա, քիմիական տեխնոլոգիա	ՀՀ ԳԱԱ «Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ